

**Պատրժության օլիմպիադայի մարզային փուլ (2021-2022 ուստարի)
10-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)**

ա) Հայոց պատրժություն (15 միավոր)

1. Ե՛րբ է Տիգրան Երվանդյանը, դաշնակից զորքերի գլուխ անցած, գրավել Բաբելոնը. 0,5 մ.
 1) Ք. ա. 553 թ. 2) Ք. ա. 524 թ.
 3) Ք. ա. 529 թ. 4) Ք. ա. 539 թ.
2. Ո՞վ էր Արատտայի հովանավոր աստվածը. 0,5 մ.
 1) Հայկ 2) Արամ
 3) Հայ(ա) 4) Հայոս
3. Որտե՞ղ էր գտնվում Արամ Երկիրը. 0,5 մ.
 1) Հայկական լեռնաշխարհի հյուսիսում 2) Վանա և Ուրմիո լճերի միջև
 3) Արարատյան դաշտում 4) Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում
4. Ո՞վ էր Հայաստանի աստրապը Ք. ա. 401 թ. 0,5 մ.
 1) Երվանդ I-ը 2) Երվանդ II-ը
 3) Տիրիբազը 4) Երվանդ III-ը
5. Ո՞ր թվականից է գահակալել Արշամ Երվանդականը. 0,5 մ.
 1) Ք. ա. մոտ 260 թ. 2) Ք. ա. մոտ 220 թ.
 3) Ք. ա. մոտ 240 թ. 4) Ք. ա. մոտ 201 թ.
6. Քանի՞ գավառ ուներ Այրարատ նահանգը. 0,5 մ.
 1) 37 2) 28
 3) 20 4) 17
7. Ուրարտական ո՞ր արքայի օրոք է սկսվել դաշնային աշխարհագրի փոխարինումն արիեստավարժ կանոնավոր բանակով. 0,5 մ.
 1) Արգիշտի I-ի 2) Իշպուինիի
 3) Ռուսա I-ի 4) Սարգուրի II-ի
8. Ե՛րբ է Տիգրան Մեծը Կորդուքը միացրել Մեծ Հայքին. 0,5 մ.
 1) Ք. ա. 84 թ. 2) Ք. ա. 93 թ.
 3) Ք. ա. 88 թ. 4) Ք. ա. 94 թ.
9. Ե՛րբ է Մեծ Հայքում ավարտվել Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանությունը: 0,5 մ.
10. Ո՞ր թագավորի օրոք է Վանի բանակում առանձնացվել «արքայական գունդը»: 0,5 մ.
11. Ո՞վ էր Արևմտյան Հայաստանի կառավարիչը Ք. ա. 401 թ.: 0,5 մ.
12. Որքա՞ն է Վանա լճի հայելու բարձրությունը ծովի մակերևույթից: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
 ա. Արտավազդ II-ի և Կրասոսի հանդիպումը Ասորիքում
 բ. Հռոմեա-պոնտական պատերազմների ավարտը
 գ. Արտաշես II-ի դավադիր սպանությունը
 դ. Տիգրան Մեծի և Միհրդատի միջև հայ-պոնտական պայմանագրի կնքումը
 ե. Երկրորդ եռապետության կազմավորումը Հռոմում
 զ. Հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
 է. Հռոմի դրածո Արտավազդ III-ի վտարումը Հայաստանից
 ը. Արտավազդ II-ի եղերական մահը
 թ. Առաջին եռապետության կազմավորումը Հռոմում

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

- 1. Արամ
- 2. Արամանյակ
- 3. Արամայիս
- 4. Ամասիա
- 5. Երաստ
- 6. Արա Գեղեցիկ
- ա. Արագած
- բ. Արմավիր
- գ. Մասիս
- դ. Արմենիա
- ե. Երասխ
- զ. Այրարատ

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա. Ք. ա. 830-ական թթ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում կազմավորվել է Էթիունի երկրի համադաշնությունը:
- բ. Արգիշտի I-ի օրոք Վանի թագավորությունը (Բիայնիլի-Ուրարտու-Արարատ) հասել է աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:
- գ. Արգիշտի I-ի որդին՝ Արգիշտի II-ը, թեև գահ է բարձրացել դժվարին ժամանակաշրջանում, սակայն կարողացել է զարկ տալ քաղաքաշինությանը, արհեստներին ու առևտրին, հիմնել կամ վերակառուցել է բազմաթիվ ամրոցներ, անցկացրել նոր ջրանցքներ:
- դ. Ռուսա III-ի իշխանության շրջանից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Արարատյան դաշտի և Վանա լճի արևելյան շրջանների հնավայրերից:
- ե. Վանի թագավորության զորքի գերագույն հրամանատարը առաջին սպարապետն էր:
- զ. Մենուայի առաջին քայլերից մեկն էր Եփրատի աջափնյա հատվածում ամրապնդվելը, որի նվաճումից հետո էլ հիմնադրվել է ռազմավարական խոշոր հենակետ Մենուախինիլի քաղաքը:
- է. Վանի թագավորության հզորացման և տարածաշրջանում նշանակալի տերություն դառնալու գործում կարևոր դեր են խաղացել Իշպուհնիի և Մենուայի կատարած բարեփոխումները:
- ը. Մարաստանի թագավոր Կիաքսարի դեմ պատերազմում պարտություն կրելով՝ Երվանդ Սակավակյացը թեև ճանաչել է մարական գերիշխանությունը, սակայն հրաժարվել իշխանությունից:
- թ. Վանի համահայկական թագավորության անկմանը նպաստել են արևելքից երկիրն ասպատակող կիմերները:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

- ա. Հյուպարթոս – Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը Աքեմենյան տիրապետության շրջանում
- բ. «Ժամանակ անիշխանության» - Ըստ Մովսես Խորենացու՝ 226 թվականից հետո Իրանում Սասանյանների իշխանության գալուց հետո ստեղծված իրավիճակը
- գ. Փանդիո – Հնագույն հայկական հարվածային գործիք
- դ. Հայոց մեծ թվական – Տոմարական համակարգ, որի սկիզբ է համարվել Ք.ա. 2492 թ. օգոստոսի 11-ը
- ե. Բուն հելլենիստական ժամանակաշրջան – Հելլենիզմի պատմության՝ մեր թվարկության I-III դարերն ընդգրկող ժամանակաշրջան
- զ. Հեթանոս – Հին հայոց հավատքի և քրիստոնեության սկզբնական շրջանում «հեթանոս» նշանակում էր «ցեղ», «ազգ», միջնադարում՝ «ոչ քրիստոնյա, այլակրոն»
- է. Մաղխագություն – Արքունի կավածքների և գանձարանի հսկողության համար պատասխանատու գործակալություն Մեծ Հայքի թագավորությունում
- ը. Ոստանիկ այրուձի – Ընտրյալ նետաձիգներից նետաձիգներից բաղկացած և մշտապես կարևոր սահմանային կետերում գտնվող հեծյալ զորք:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա. Ք.ա. 36 թ. Անտոնիոսը 100-հազարանոց բանակով ժամանել է Արևելք:
- բ. Հռոմի դաշնակից պարթևները չեն ստացել Պոմպեոսի խոստացած տարածքները, ավելին՝ Պոմպեոսը ճանաչել է Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը:
- գ. Ատրպատականի մայրաքաղաք Փրասպայի պարիսպների տակ Անտոնիոսի բանակը 20 հազար սպանված է ունեցել:
- դ. Ք. ա. II դարում ապրած հռոմեացի պատմիչ Տակիտոսը հավաստիացնում է, որ Արտաշատի տեղանքն ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը:
- ե. Տիգրան III-ի շեշտված հակահռոմեական դիրքորոշման պատճառով Հռոմը նրան գահընկեց է արել և գահ բարձրացրել նրա որդուն՝ Տիգրան IV-ին:
- զ. Հայաստանը թուլացնելու նպատակով Հռոմը նրանից անջատել է Ատրպատականը և այնտեղ թագավոր կարգել իր կամակատար Արիոբարզանեսին:
- է. Ք. ա. 5 թ. Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկել իր որդեգիր Գայոս Կեսարին, որը գահընկեց է արել Տիգրան IV-ին:
- ը. Արտաշես I-ի հանձնարարությամբ Սմբատ Բագրատունի զորավարը ջախջախել է վրացական բանակը և Հայաստանին վերադարձրել Գուգարք նահանգը:
- թ. 52 թ. Վաղարշը և Տրդատը պարթևական զորքով մտել են Հայաստան, դուրս վրնդել Հռոմի դրածո Միհրդատին ու նրա մերձավորներին:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (3 X 0,5 մ.)
- Արտաշեսի որդի Արտավազդին Մովսես Խորենացին հիշատակում է իբրև «այր իմաստուն և բանաստեղծ»*

Ուղղում – Ոչ թե՛ _____, այլ _____ :

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- « ... Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմեացիների մեջ»:*
- ա. Ո՞ր պատմիչի խոսքերն են մեջբերված այստեղ:
- բ. Հայոց ո՞ր արքայի մասին է խոսքը:
- գ. Ո՞ր քաղաքը նա դարձրեց իր աթոռանիստը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ օրոք է կառուցվել Աքքադ քաղաքը. 0,5 մ.
- ա. Սարգոն բ. Համմուրապի
- գ. Սալմանասար I դ. Նարամսին
2. Եգիպտական ո՞ր փարավոնն է կատարել կրոնական բարեփոխում և իրեն կոչել Էխնաթոն. 0,5 մ.
- ա. Ամենհոտեպ IV բ. Թութմոս III
- գ. Ռամզես II դ. Յահմոս I
3. Ե՞րբ է հիմնադրվել Միտաննիի թագավորությունը. 0,5 մ.
- ա. Ք.ա. XVIII դ. բ. Ք.ա. XVII դ.
- գ. Ք.ա. XVI դ. դ. Ք.ա. XV դ.
4. Ո՞վ է մտցրել օստրակիզմը Աթենական պետության մեջ. 0,5 մ.
- ա. Սոլոնը բ. Կլիսթենեսը
- գ. Պիսիստրատը դ. Պերիկլեսը

5. Ինչպե՞ս էր կոչվում գործադիր իշխանության ճյուղավորված համակարգը Հռոմում: 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք.

1 մ. (4 X 0,25 մ.)

1. Արեոպագոս
2. Էկլեսիա
3. Էվպատրիդներ
4. Դեմարքոս

1	2	3	4

- ա. Ընտրովի ղեկավար
- բ. Տոհմային ավագանի

- գ. Ավագների խորհուրդ
- դ. Ժողովրդական ժողով

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա. Ք.ա. XVII դ. Խաթաթախի I-ը, միավորելով քաղաք-պետությունները, ստեղծել է պետություն, որը խեթերը կոչում էին Խաթաթի:
- բ. Միացյալ Եգիպտոսի առաջին արքա Մինան Նեղոսի դելտայի շրջանում կառուցել է նոր մայրաքաղաք՝ Մեմֆիսը:
- գ. Ք.ա. 597 թ. բաբելոնյան զորքերը գրավել են Հուդայի թագավորության մայրաքաղաք Երուսաղեմը, որի արդյունքում Հուդայի ազնվականությունը բնաջնջվել է, իսկ թագավորությունը՝ որպես նահապ, կցվել Բաբելոնիային:
- դ. Ք.ա. XVIII-XVII դարերում Հնդկաստան են ներթափանցել արիական ցեղերը և տիրել Հյուսիսային Հնդկաստանին:
- ե. Կրետեի պետությունը անկում է ապրել Ք.ա. XV դ.՝ հարյուրավոր կիլոմետրեր հեռու ընկած Դելոս կղզում տեղի ունեցած վիթխարի ուժգնության հրաբխի ժայթքման հետևանքով:
- զ. Ք.ա. 200-190 թթ. Հռոմը պարտության է մատնել Մակեդոնիային և Պարթևական պետությանը:
- է. Ըստ զրադաշտականության՝ բարի և ստեղծարար ոգին էր Ահուրամազդան, իսկ նրա հակառակորդը՝ Ահրիմանը:
- ը. Առաջին եռապետությունը կազմել են Հռոմի երեք նշանավոր զորավարները՝ Գնեոս Պոմպեոսը, Մարկոս Անտոնիոսը և Հուլիոս Կեսարը:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

07.02.2022 թ.